

**ՇԻՐԱԿԻ Ս. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ**

15 փետրվարի 2020թվ, № 25. 3. 1

«ՇԻՐԱԿԻ Ս. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
2020թ. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՇՊՀ կանոնադրության 41 կետի 16-րդ ենթակետով և ՇՊՀ ՀԽ աշխատակարգի 2. 2. 16 ենթակետով ՇՊՀ հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

3.1. Կանոնադրությանը լրացնել 27.4 հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

«27.4. ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի կազմում ՇՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի, քոլեջի եւ ավագ դպրոցի ներկայացուցիչներից որեւէ անդամի տեղը թափուր դառնալու դեպքում այն լրացվում է ՇՊՀ այն ստորաբաժանման կամ ստորաբաժանումների կողմից առաջադրված թեկնածուներից կատարվող ընտրությամբ, որոնցից ներկայացուցիչ չկա հոգաբարձուների խորհրդի կազմում: Այդ ստորաբաժանման կամ ստորաբաժանումների կողմից թեկնածուների ընտրությունը կատարվում է այս կանոնադրության 27, 27.1, 27.2 կետերով սահմանված առաջադրման եւ քվեարկության կարգով:»

ՇՊՀ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ _____ Լ.ԲԱՐՍԵՂՅԱՆ